

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 23.09.2021 թ. կայացած թիվ 02.21-22 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 32-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագրերի 2019 հաշվետվության ընդունման հարցը:
2. Օպտիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզ.-մաթ. գիտությունների թեկնածու **Աղավնի Ալբերտի Կուտուզյանին** Ա.04.21 <<Լազերային ֆիզիկա>> մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունների ղեկավարելու համար ԲՈԿ-ից թույլատվություն ստանալու հարցը:

Լսեցին՝ Ֆիզիկայի ֆակուլտետի Սոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ Շուշանիկ Տոնոյանի (ղեկավար) «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԻ–2019» 19YR-1F057 ծածկագրով “Միապատ ածխածնային նանոխողովակների և նուկլեինաթթուների հիբրիդներ. կինետիկան” նախագծի ամփոփիչ հաշվետվության ընդունման հարցը:

Որոշեցին՝ Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Շուշանիկ Տոնոյանի ամփոփիչ հաշվետվությունը:

Լսեցին՝ Ֆիզիկայի ֆակուլտետի Սոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Իշխան Վարդանյանի (ղեկավար) «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԻ–2019» 19YR-1F078 ծածկագրով “Պոլիէլեկտրոլիտային բազմաշերտերում լիցքավորված փոքր մասնիկների անոմալ դիֆուզիայի ուսումնասիրումը հոսող ցիտոմետրիայի միջոցով” նախագծի ամփոփիչ հաշվետվության ընդունման հարցը:

Որոշեցին՝ Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել Իշխան Վարդանյանի ամփոփիչ հաշվետվությունը:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզ.-մաթ. գիտությունների թեկնածու **Աղավնի Ալբերտի Կուտուզյանին** Ա.04.21 <<Լազերային ֆիզիկա>> մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունների ղեկավարելու համար ԲՈԿ-ից թույլատվություն ստանալու հարցը:

Ելույթ ունեցան՝ Պրոֆեսոր Ո.Ալլահվերդյանը, դոցենտ Ա.Մակարյանը, ովքեր նշեցին, որ Ա.Կուտուզյանը գիտամանկավարժական գործունեության ընթացքում ղեկավարել է բազմաթիվ ավարտական և մագիստրոսական աշխատանքներ, գերարագ օպտիկայում ազդանշանի գրանցմանը և կառավարմանն ուղղված գիտական հետազոտությունների արդյունքում հրապարակել շուրջ 55 տպագրված աշխատանք:

Որոշեցին՝ Հաշվի առնելով օպտիկայի ամբիոնի կարծիքը, Աղավնի Կուտուզյանի փորձն ու գիտական գործունեության ծավալը՝ 21 գիտական աշխատանք (6 հոդված գրախոսվող պարբերականներում, 1 գյուտի արտոնագիր, արտասահմանյան գրախոսվող պարբերականում 3 գիտաժողովի նյութ, և 11 թեզիս) վերջին հինգ տարում, միջնորդել ԲՈԿ-ին թույլատրելու Աղավնի Ալբերտի Կուտուզյանին Ա.04.21 <<Լազերային ֆիզիկա>> մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավար հանդես գալու համար:

Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի նախագահ՝

Ռ.Ս. Հակոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Գ.Հ. Հովհաննիսյան